

Աստի գշիոյն հարաւոյ որ եկն լսել զիմաստութիւն Սողոմոնին սա էր անունն Ասիա Նփեստսէ: Այս է աշխարհս . Գ. բաժին. Ասիա. Լիբիա. Բորիա. Ափամէջ յերկրի. Լիբիա. Հապաշք. և Հնդկիք. Բորիա Պոսանգք. յարեմուտէ:

Աղէքսանդրէ Մահկեղնացոյ, մինչև ի Քրիստոսի Ծնունդն. Յ. Լ. Գ. . Ամէն:

(Շարունակելի)

70. Վ.



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ.

Ա. Ն ա մ ա կ.

### Սիրելի վաճառ.

Քանի՞ ամիս եղաւ արդեօք աշակերտական նստարանը թողնելդ, որ այսպէս ճեպով ուսուցչիդ օգնութեանն ես գիմում և նամակ նամակի յետև ից թողնելով, խորհուրդներ ես խնդրում ուսուցչական գործունէութեանդ համար: Կարողում քո ցոյց տուած անկախութեանդ և ազատ զբաղմունքների համար ունեցած սէրդ ինձ այն համոզմունքն էր ազդել, որ դու դպրոցի շէմքը թողնելուց և ուսուցիչների օտխամար ուսանելուց ազատուելով, հազիւ թէ նոյն իսկ ողջունի գիր գրես ում և իցէ քո գաստիարակներիցդ: Իմ այդ համոզումն այնքան հաստատուն էր, որ պիտի խոստովանիմ՝ թէ ուրիշ շարժառիթների էի վերադարձում նամակներից: Չը գովամակիս այս խոստովանութեանս վերայ, որովհետև գաղտնիք է գրեթէ տասնամեայ ուսուցչական փորձառութիւնից: Քանի քանիները քեզ պէս հազիւ թեւադրուած թողել են այն դպրոցների յարկերն, ուր ես ուսուցչութիւն եմ արել և սակայն դրանցից ոչ մէկն էլ կենդանութեան նշան չէ տուել դպրոցից բաժանուելուց յետոյ: Չը կարծես որ ես այդ անձնական վիրաւորանք եմ համարում, ոչ ինձ աւելի ցաւ է պատճառել, որ այդ շրջանաւարտները մոռացել են իրենց խնամարկող վայրը հոգևոր ծննդավայր հայ դպրոցը:

Արդեօք որի՞նն է այդ սեղ.քը, դպրոցի՞նը, ուսուցիչների՞նը, թէ՞ սաների՞նը: Բայց

այդ հարցման ես դեռ չեմ պատասխանիլ, դու դրա պատասխանն ինքդ գուշակիք իմ նամակիցս: Ընդունիր արդ իմ շնորհակալիքս, որ այդ տխուր համոզումն եկել ես այն վայրկեններին խախտելու, երբ ես ամենուտեք միմիայն անտարբերութիւն տեսնելով պատարաստ էի այդ անպատու ասպարէզը թողնելու: Գէօթէի խօսքերով կուզէի քեզնից շընորհակալ լինել „Doch, ach! für diesmal dank ich dir, ... (Faust 255 և 257).

Կառնամ սակայն խնդրիդ, ուսուցչութիւնը քեզ ծանր է գալիս, դու առաջնորդի ես կարօտ, որ գլխիդ մէջ ամբարած գիտութիւնիցդ և սրտիդ մէջ փակած զգացումներիցդ բաժին հանես աշակերտներից: Կրանով իսկ ճանաչում եմ, որ կոչումն ունիս պաշտօնիդ համար և ի սրտէ քեզ օգնել կուզէի, բայց ի՞նչպէս, մանկավարժութեան դասեր տալու հնար չը կայ այլևս, դրան արգելք են ժամանակն և հեռուորութիւնը: Սակայն այսուամենայնիւ կամենում եմ քեզ օգնել, ուստի որոշեցի նամակներով աւանդել այն գործնական խրատները, որ անհրաժեշտ են ամէն մի ուսուցչի համար: Մեր դարը գործնականութեան դար է, հեռուից դասաւանդելու հնարն ևս չգրտնուել է: Եւրոպայում նամակներով լեզուի դասեր անգամ աւանդում են, ինչո՞ւ ուրեմն նոյն միջոցով հնար պիտի չը լինի մանկավարժութիւն աւանդել:

Այս նամակներով ես համակարգեալ մանկավարժութեան դասեր տալու ցանկութիւն չունիմ, իմ նպատակս է գործնական խրատների մի սմիովումն տալ քեզ, որպէս զի դրանցով առաջնորդուիս իսկ ժամանակի ընթացքում թերևս ինքնաշխատութեամբ միջոց ունենաս այն տեսութիւնների հետ ծանօթանալու, որոնց վերայ այդ խրատներն հիմնուած են:

Կու արդէն երկու ամիս է ուսուցիչ ես և անելիքներիդ մասին պարզ գաղափար չունիս, ամէնից առաջ ուրեմն քեզ կարեւոր են այն խրատները, որ ուսուցչի անձնաւո-

րութեան են վերաբերում: ուստի և ես նախ պիտի գրեմ՝ ուսուցչական չորս առաքինութիւնների մասին. այսինքն է՝ ա) արթնութեան, բ) կարգաօրութիւն, գ) արդարասիրութիւն և դ) հետևողականութեան մասին: Թէ ինչո՞ւ եմ ես նախ ուսուցչական մասնութեան մասին խօսում և ոչ գալրոցական այլ խնդիրների, պարզ է, որովհետև որոշ գալրոցական ծրագիր կայ արդէն առաջևդ, որով պիտի առաջնորդուիս ինչպէս և որոշ գալրոցական սահմանադրութիւն կայ, որին հպատակել ստիպուած ես ուստի և դրանց վերաբերեալ տեսութիւնները կարող են միայն միտքդ հարստացնել, բայց գործնական պարտաւանդդ չեն օգնել, իսկ ուսուցչից եղած մանկավարժական պահանջներն այս վայրկենիս իսկ անհրաժեշտ են քեզ համար:

Ուսուցչական չորս առաքինութիւնների մասին խօսելուց առաջ կարևոր է, որ դու գիտենաս թէ ի՞նչ է պահանջուում ամէնից առաջ իւրաքանչիւր ուսուցչից ընդհանրապէս: Ահա այդ մասին եմ կամենում խօսել քեզ հետ այսօր:

### Ուսուցչի օրինակը.

Յիշում ես արդեօք քո գալրոցական վերջին տարին, մտաբերում ես ձեր անկերպարան դասարանը, ուր դուք ամէնքդ էլ խորենացու գրուստած աշակերտներին էիք նմանում. աշակերտ հեղգաւ ի յուսումն և վոյթ առ ի վարդապետեր: Աներկբայ եմ, որ յիշողութեանդ մէջ դեռ թարմ է այդ տարին և ձեր դասարանի պատկերը: Այդ տարեշրջանի բազմափոփոխ երևոյթներից միտքդ կը լինին անշուշտ և այն ժամերը, երբ ես ներս էի մտնում Քանիցս արդեօք ներս մտնելու պէս մինչև դասարանի խորքն էի անցնում և այդպէս իրբև թէ ամենին բարեւել կամենալով ձեր կարգապահութեան անսովոր դասարանը միանգամից լռեցնում և կարգի ձգում: Քանիցս արդեօք ես էի սրբում և մաքրում ձեր

դասառան գրատախտակն ու կախն և քսպունգն իւր տեղը դնում, որպէս զի այդ օրինակով կարևոր կարգապահութեան վարժեցնում ձեզ:

Անշուշտ մոռացած չես լինիլ նաև իմ յաճախ կրկնած խօսքերս. «խնդրեմ՝ դասառան մէջ այնպէս նստէք, այնպէս շարժիք և այնպէս վարուիք ու խօսէք, ինչպէս ես ձեր ուսուցիչն, եմ նստում, շարժուում, վարուում ու խօսում»: Այո՛, այդ միջոցով միայն կարող եղայ ես ձեզ մի փոքր կորգի վարժեցնել: Սակայն այս ամէնը մի անկերպարան շրջանի երևոյթներ են և ես չէի ցանկալ, որ դու երբէք այդպիսի երևոյթների հանդիպես: Այս երևոյթներն յիշելուս նպատակն է միայն այն, որ ցոյց տամ քեզ, թէ իւրաքանչիւր չարիք հիմքից պիտի բարձուի, իմ խորին համոզումն էր, որ ձեր դասարանի անկարգութեան, ձեր ամէնիդ անվայել ընթացքի պատճառները չար օրինակն է եղել, ուստի դուք ուղղուել կարող էք միայն բարի օրինակով: Որ ես հիւանդութիւնն ուղիղ էի հասկացել, այդ ամէնքդ էլ հասկացաք և ձեզնից ըմբոստագոյններն ու անկարգագոյններն առաջին օրինակներից իսկ փոխեցին իրենց ընթացքը:

Այո՛, մեծ է օրինակի ազդեցութիւնը:

Ամենուրեք, բայց մանաւանդ դաստիարակութեան գործում, խօսքերը գաճաճներ են և գործերը հսկանքն: «օրինակներն աւելի ազդու են, քան թէ խրատները», «աւելի մեծ նշանակութիւն ունին աշակերտների առաջ օրինակելի վարքը, քան թէ նրանց գլխին կարգացած խրատները»:

Եթէ աշակերտը պիտի իրենից պահանջուած առաքինութիւններին հասնի, անհրաժեշտ է, որ ուսուցիչը միշտ և ամենուրեք ինքը լինի այդ առաքինութեան օրինակը: Մարգրիկ առաւել իրենց աչքերին են հաւատում քան թէ ականջներին, օրինակներն աւելի են ազդում, քան թէ բառերը: Ուստի և ուսուցիչն այն պէս է լինի, ինչ որ աշակերտը պիտի դառնայ, այն պիտի գործէ, ինչ

սաներիցն է պահանջում այն պէտքէն ինչ պէտքէն է մանուկներին: Ուսուցիչը պիտի միշտ էւր աշակերտներէն առաջ ապրէ առանց քննելու թէ արդեօք նրանք տեսնում են իրեն լսում են իւր խօսածները, նա պիտի լինի իւր աշակերտների նախադասը: — օրէնք:

Ուղենք չուղենք, այդպէս էլ լինում է իրականութեան մէջ. աշակերտները կարգապահ ու ճշգրտապահ են, եթէ նրանց ուսուցիչը կարգապահ է ու ճշտակատար. նրանք մեղմ կարեկցող, արգարասէր, խաղաղ և կամակատար են, եթէ ուսուցիչը նրանց վերաբերութեամբ մեղմութիւն, արգարութիւն և բարեկամութիւն է ցոյց տուել. այն, նրանք մինչև իսկ զուարթ, գոհ և երջանիկ են, եթէ ուսուցիչի դէմքը դաստան մէջ զուարթ ու պայծառ է, սիրտը գոհ և երջանիկ: Ընդհակառակն ամէն տեղ նկատուած երևոյթ է, որ յամառ ուսուցիչի աշակերտներն ևս յամառ են լինում, ծոյլ և անկարգ ուսուցիչը միշտ գանգատուում է ծովութեան և անկարգութեան դէմ, անքաղաքաւոր և կոպիտ վարժապետներին յաճախ իւր աշակերտներն յուսահատեցնում են իրենց կոպտութեամբ: Դպրոցական դաստիարակութեան յեռնակէտը դասընդ, մի այլ պէպ և մի այլ երէ մէջ է, այլ ներքին է, ասուցիչի անդամադրութեան մէջ, ասում է մի գերմանացի յայտնի մանկավարժ:

Եթէ ուսուցիչը միայն դաստիարակ է, այլ միևնոյն ժամանակ և այնպիսի դաստիարակ է, որ աշակերտներից ճանաչուած է իբրև հեղինակութիւն, բարոյականի և վարքի ու բարքի վերաբերութեամբ, այն ժամանակ միայն նորա գործունէութիւնը արգասաւոր կը լինի: Ուսուցիչն իւր օրինակով պիտի նմանի այն բարձրուելէ կազմուն, որին փաթաթուելով աշակերտը, պիտի վեր բարձրանայ և ծաղկի իբրև պատուաւ: Առանց ուսուցիչի օրինակի աշակերտը չի դաստիարակուել, այլ բարոյապէս վայր կը նկնի:

Թող ոչ մի ուսուցիչ չը մոռանայ, որ

մենք գրել սովորում ենք գրողներից, նկարել նկարողներից և գործել, գործունէից: Երբ ուսուցիչն իւր դպրոցում թերութիւններ է նշմարում թող նա ամենից առաջ իւր մէջ որոնէ այդ թերութիւնների սկզբնապատճառը: Աշակերտն իւր ուսուցչին է նմանում, «ճառն իւր պտղիցն է ճանաչում», պատկերըն իւր նախատիպին է նման: Ուր ուսուցիչը իւր աշակերտներին օրինակ է, ուր նա իւր աշակերտների համար օրէնքներ է դրնում, որ ինքը չէ պահում, ուր նա այնպիսի թերութիւններ է պատժում, որ ինքն էլ է գործում, այնպեղ մանկանց դաստիարակութիւն չը կայ: Ահա այն է ուսուցչութեան առաջին պարտականութիւնը: Ուսուցչի վեհ պաշտօնն ստանձնելով մտածիր, որ քեզ են նայում հարիւրաւոր մանկանց աչքեր, քեզ են լսում հարիւրաւոր ականջներ և քեզնից են օրինակ տունում հարիւրաւոր մատաղ սրտեր: Կրթիր քեզ, որ ուրիշին կրթել կարողանաս:

Մտածիր այն դառն հետեւանքների մասին, որ կարող է ունենալ քո վատ օրինակը: Ահ, երանի թէ լաւ կշռես այս խրատի ծանրութիւնն և ամէն անգամ երբ քայլես, նստես, խօսիս, շարժուես, յիշես, որ քո այդ քայլդ, վարմունքդ, խօսքդ, շարժումդ մի մի նախակազմակերպ են քեզ նայող սաներից համար:


Քննիր անձդ, տես, այժմ արդէն խելահաս ես, չը կանք քո մէջ ուսուցիչներից վատ յատկութիւնները, եթէ կան, և կը լինեն անշուշտ, բայց քցիր դրանք, որ սերնդէ սերունդ հաճի չը դարգանայ չար օրինակը:

Ձը կարծես թէ մեծամեծ բաների համար է միայն լաւ օրինակը, ոչ, ամենափոքրերի համար իսկ դա կարեւոր է: Այն կոպիտ բառը, այն անվայել շարժումները, այն անկարգ քայլն և անճոռնի նստուածքը, որ կը լսեն ու կը տեսնեն սաներդ, մի մի չար օրինակ պիտի դառնայ, որ սերնդէ սերունդ շարունակելով պիտի երկարացնէ քո մեղքը:

րիդ ցուցակը: Գասառան մէջ քո հանած ձայնդ, գծած գիծդ, գրած բառդ, տուրդ և դասդ եթէ անհամապատասխան և վատ են, քեզ կը հալածեն դպրոցումն և կեանքի մէջ հասարակութիւնը: Երբեք ունէր այն անձը, որ ստահակ մանկան անվայել ընթացքը տեսնելով փայտն առաւ և նոր մանկածուին [պէղազոգ] ծեծից, այսպէս էլ մանուկներին հասած հարուածներէն ու յանդիմանական խօսքերէն մի իններորդը պատկանում է ուսուցիչներին: Տես, որ այդ հարուածներին չարժանանաւ մէկ օր:

Անձուէր ուսուցիչդ՝

Մեսրոպ



## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ:

### ՍԵՍՈՒՆՅԻ ԴԵՒԻԹ.

Շուտով կը լրանայ մի քառսրդ դար այն օրուանից երբ շնորհիւ յիշատակաց արժանի Գ. Սրբանձտեան վարդապետի մեր գրականութեան մէջ յայտնի եղաւ «Սասունցի Դաւիթ» կամ «Մհերի գուռն» կոչուած մեծ ժողովրդական վէպը: <sup>1</sup> Մինչև այդ ժամանակ ոչ ոք այդ վէպի մասին գաղափար չունէր, ոչ միայն այդքանն, այլ ոչ ոք չէր իսկ ենթադրում, որ մեր ժողովուրդը կարող է այդպիսի կենդանի վէպեր ունենալ: Դրանից մի քսան տարի առաջ միայն հայ բանասերները գտել էին հայկական հին վէպերի հետքերն Մ. Խորենացու մէջ և կարողացել էին ապացուցանել, որ հայ ազգն ևս միւս քաղաքակիրթ ազգերի պէս իւր պատմական ճակատագիրը ու բարոյական գաղափարները մարմնացրել է վիպասանութիւնների մէջ: Հայ ազգի քաղաքակիրթութեան նշաններէն էին

և նորա հնագոյն վէպական ստեղծագործութիւնները, որոնք սակայն անցեալ փառքին միայն կարող էին ծառայել, մինչ նորագոյն ժամանակի համար մեզ թուում էր թէ՛ հայը կորցրել է իւր հին քաղաքակիրթութեան հետ և բանաստեղծական ձիրքը: Այժմ այդ հերքուած է շնորհիւ հայ ժողովրդական բանաստեղծութեան այն հարստութեան, որ հետ զհետէ լոյս աշխարհ է հանուում:

«Սասունցի Դաւիթ» վէպն հրատարակուելու օրուանից ամէնքի ուշագրութիւնը գրաւեց նա իւր աչքի ընկնող հարուստ բովանդակութեամբ և արտաքին ձևով: Սխալում էր անշուշտ ականաւոր ծրագրողը, երբ կարծում էր, որ այդ գործին չը հաւանողները շատերը պիտի լինին, ոչ եթէ 20 հոգի միայն հաւանեցին և սիրեցին «Սասունցի Դաւիթ» ինչպէս ցանկանում էր գրի առնողն, այլ նա դարձաւ հայ դպրոցական մանուկներից սիրած մինչև ակնարդ գրագէտների սիրելի ընթերցարանը: 1874 թուականից մինչև այսօր «Սասունցի Դաւիթ» երկու ընդարձակ բնագրեր միայն հրատարակուել են <sup>1</sup> և յայտնուել մի քանի վարկածներ, այսօր մեզ յայտնի է այդ վէպի երեք խմբագրութիւն: Մշոյ, Մոկաց և Սասնոյ վիւթինիս բնագրի ամբողջութիւնը գեռ գրի չէ առնուած, թէպէտ և յայտնի է նրա գոյութիւնը:

Այդ երեք խմբագրութիւններն ևս էապէս միեւնոյն են, վէպի հիմնական գաղափարը և առանձին միջնադէպերը գրեթէ բոլորի մէջ էլ անփոփոխ կան, տարբերութիւնները դիւրութեամբ բացատրւում են բերանացի աւանդութեան գծաւարութիւններով: Այս վէպի ընդհանուր ուրուագիծն յայտնի է այժմ սակայն միջնագէպերը (episode) թերի են, ուստի և ցանկանալի է ժողովել ամենուրեք վէպիս մնացորդները, որպէս զի վերջնական կերպիւ մի բնագիր կամ գոնէ մի լիակատար ուրուագիծ ունենանք հայ մտքի և երեւակայութեան այդ նշանաւոր ստեղծագործութեան:

<sup>1</sup> Գրոց ու բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Մհերի գուռն ծրագրից Գ. Վ. Սրբանձտեանից Կ. Պոլսի, ղպ. Ն. Մ. Տնտեսեանի 1874.

<sup>1</sup> Մ. Արեղեան Դաւիթ եւ Մհեր • եւ Գարեգին սարգաւազ Սասնայ ծոբեր: